

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Նախարարաց խորհուրդը երեկ յետմիջօրեին իր նստավայրին մէջ գումարեց իր ժողովը, գլխավորութեամբ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ նախարարներուն:

Ժողովին բացակայեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ նախարար Թալալ Արալան ճամբորդութեան պատճառով:

Կառավարութեան ժողովին առաջ նախագահ Լահուտի հանդիպումը ունեցաւ վարչապետ Հարիրիի հետ: Քննարկումի առարկայ դարձան Լիբանանի ու շրջանը յուշող վերջին վարձագումները:

Ժողովին նախագահ Լահուտի անդրադարձաւ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի Լիբանան այցելութեան եւ պայմանական պատմական այցելութեան, որ կարեւորութիւն կը ստանայ արաբական վեհաժողովի կայացման իմաստով, ինչպէս նաեւ վերջին օրերուն շրջանի դիմագրուած տագնապներուն մէջ իսկ արաբական միասնականութիւնը խորհրդանշող իրեն հանդիպում:

Լահուտի ընդգծեց, որ այս այցելութիւնը արտայայտութիւնը եղաւ եղբայրական համագործակցութեամբ յաղթահարելու շրջանային թէ միջազգային հարցերը, որոնք կը սպառնան Լիբանանի եւ Սուրիոյ:

Նախագահ Լահուտի յայտարարութեանն էտք ժողովը անցաւ օրուան օրակարգի հարցերուն, քննարկեց բազմաթիւ հարցեր եւ տուաւ համապատասխան որոշումներ:

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎ

Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ Չորեքշաբթի օր Դամասկոսի մէջ ընդունեց Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեանի գլխավորած պատուիրակութիւնը: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ Սուրիոյ խորհրդարանի նախագահ Ապտէլ Քատեր Քատտուրա:

Հանդիպումին ընթացքին կողմերը անդրադարձան հայ - սուրիական յարաբերութիւններուն, եւ միտքեր փոխանակեցին տնտեսական, գիտական եւ մշակութային մարզերէն ներս այդ յարաբերութիւններու վարձագումնա շուրջ: Քննարկուեցաւ նաեւ Միջին Արեւելքի տագնապը եւ անոր լուծման հեռանկարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը մտն օր առաւօտեան ժամը 9:00ԵՆ կէսօրը ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզայի) պետական հիւանդանոցային բուժում:
 - 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամակ):
 - 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
 - 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
 - 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (հսրէն) դիմումներ:
 - 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
 - 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
 - 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱճԵ Էլ Աճ) հետ կապուած հարցեր:
- Դիմողները պէտք է ներկայանան «Շաղոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 թիւերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀՍԿՈՒՄ Ս. Ք. ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ

Ուրբաթ, 8 Մարտ 2002ի երեկոյեան ժամը 6:30ի հսկումի արարողութեան ներկայ պիտի ըլլայ եւ պիտի քարոզէ՝

ՀՈԳ.Տ. ՀԱՄԱՐՁՈՒՄ ՎՐԴ. ՔԻՇԻՇԵԱՆ

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, ներկայ ըլլալու եւ հաղորդուելու օրուան պատգամով:

Ս. Ք. ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԵՐՈՊԵՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 8 Մարտ 2002 երեկոյեան ժամը 7:30ից, Պուրճ Լամուտի Ը. Կ. Մ.ի սրահին մէջ:

ՉԸՁԴԱԼԼԱՅԻ ՊԱՏՃԱՌՈՎ

ՊԵՅՐՈՒԹ ԶՈՒՋԵՐ ԶԱԿԱՏՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՇԵՏ

Կ'ԸՍԷ ՀԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ պատկերասփռուած հարցազրույցի մը ընթացքին հաւաստեց, որ Լիբանան չ'ուզէր Հրապարակի գծով տարակարծութեան պատճառով ճակատումի հասնիլ Ուաշինկթոնի հետ:

Հարիրի դրուատիքով խօսեցաւ Միջին Արեւելքի խաղաղութեան վերաբերեալ Սեյտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալայի նախաձեռնութեան մասին:

«Իշխան Ապտալայի առաջարկը յստակօրէն կը պահանջէ անբողջական հեռացում բոլոր բռնագրաւեալ հողերէն եւ գործադրութիւն՝ ՄԱԿի բոլոր որոշումներուն, այսինքն՝ հիմնականօրէն թիւ 194 որոշումը, որ պաղեստինցի գաղթականներուն մասին է, նաեւ թիւ 242, 338 եւ 425 որոշումները», ըսաւ ան:

Վարչապետ Հարիրի հաստատեց, որ ամերիկացիք պահանջեցին ստեղծել Հրապարակի դրամատուլիսի հաշիւները, «իսկ մենք պատասխանեցինք, որ այդ կուսակցութիւնը որոշ կարգաւիճակ մը ունի երկրին մէջ»: Ան անելոց.

«Մենք երկխօսութիւն կ'ունենանք Միացեալ Նահանգներու հետ եւ չենք ընդունիր, որ ռե՛սէ մէկը մեզ մղէ անոր հետ ճակատումի ուղիով, որովհետեւ նման ընթացք կը ծառայէ Իսրայէլի շահերուն»:

«Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի Լիբանան այցելութեան անդրադարձնելով ըսաւ, որ շատ դրական պիտի ըլլան», ըսաւ Հարիրի, նկատել տալով, որ այս այցելութիւնը վերջ դրաւ Լիբանանի:

ԱՐԱՔ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԳՑԵԼՈՒ ԶԱՄԱՐ

ՀԱՄԱՐՈՒՏ ԱՅՍՕՐ ԳԱՀԻՐԻ ԿԸ ՄԵԿՆԻ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտ այսօր կը մեկնի Գահիրէ, ուր պիտի մասնակցի Շարք օր գումարուող արաբ արտաքին գործոց նախարարներու երկօրեայ ժողովին:

Նախարար Համուտ յայտնեց, որ ժողովին պիտի ներկայացնէ իրանական «առաջարկներու թուղթ» մը. «Լիբանանի հետ արաբական յօրակցութիւնը» խորագիրով: Հոն կը յիշուին Լիբանանի սկզբունքային կեցուածքը, խաղաղութեան համար Մատրիտի մէջ որդեգրուած սկզբունքներուն Պեյրութի կառչածութիւնն ու դատապարտումը Իսրայէլի կողմէ իրանական հողամասի բռնագրաւումին եւ իրանացիներու արգելափակումին:

Համուտ նաեւ ըսաւ, որ ժողովին պիտի պահանջէ կեանքի կոչել «Լիբանանի օժանդակելու արաբական սնտուկը»:

Ան յայտնեց, որ ժողովին պիտի ներկայացնէ համաարաբական տնտեսական գործակցութեան նոր առաջարկներ:



Վարչապետը կ'ընդունի Ճափոնի դեսպանը:

գերիշխանութեան եւ կայունութեան առնչութեամբ Սուրիոյ տրամադրութիւններուն շուրջ բոլոր կասկածներուն:

Հարիրի յոյս յայտնեց, որ յիշեալ այցելութեան ընթացքին գումարուած Լիբանանեւտրիական Գերագոյն Խորհուրդի որոշումներուն դրամական արդիւնքները պիտի յայտնուին մօտ օրէն տնտեսական մարզէն ներս:

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎ

Վարչապետ Հարիրի երեկ կէսօրին նախագահեց պետական յաւելեալ պաշտօնեաներու հարցի լուծման մէջ: Ան արարական յանձնարարներ ժողովին, որուն ներկայ գտնուեցան նախարարներ Պահիժ Թապարա, Մարուան Համատ, Ղազի Արիտի, Ֆուատ Սատ եւ Ժան Լուի Քըրտահի, վարչապետութեան ընդհանուր քարտուղար Սուէյլ Պուժի եւ պետական պաշտօնէութեան հարցերու խորհուրդի նախագահ Մուսպէր Խաթիպ:

Աւելի քան երկու ժամ տեւած ժողովին ետք, նախարար Արիտի յայտնեց, որ յանձնարարութեան պատգամ մը, որ վարչակցութիւն կը յայտնէ շրջանի խաղաղութեան համար Սեյտական Արաբիոյ գահաժառանգ իշխանին նախաձեռնութեան: Դեսպանը յոյս յայտնեց, որ յաջող կ'ըլլայ Պեյրութի մէջ կայանալիք արաբական վեհաժողովը եւ մաղթեց, որ խաղաղութիւնը հաստատուի Միջին Արեւելքի մէջ:

ԿՈՒՉՈՒԻ

Ոսկերչատուն մը կարիք ունի կապուտ մոմի վրայ աշխատող երիտասարդ վարպետի մը, նաեւ գոհարեղէնի գծագրութեան համար երիտասարդուհիի մը, 5 տարուան փորձառութեամբ: Դիմել՝ հեռ. 03-626294:

ԱՌԵՏՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տնտեսութեան, առեւտուրի, ճարտարարեստի եւ ծրագրումի խորհրդարանական յանձնարումը իր երեկուան նիստին սկսաւ քննարկումին առեւտրական ներկայացուցչութեան օրէնքի բարեփոխման օրինագիծին, որ կը նախատեսէ միակ ներկայացուցչի դրութեան եւ առեւտրական մենաշնորհներու ջնջումը:

Յանձնարումի նախագահ երեսփոխան Էլիաս Սքաֆ յայտնեց, որ ժողովը ունկնդրած է առեւտրական մենաշնորհներու տէր ընկերութիւններու եւ առեւտրականներու միութիւններու ներկայացուցչներու տեսակետները, իսկ տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պաւել Ֆլէյխան ժողովին տուած է բացատրութիւններ եւ լուսարարութիւններ՝ օրինագիծին մասին:

Սքաֆ յայտնեց, որ յանձնարումը իր յառաջիկայ նիստին պիտի սկսի օրինագիծի յօդուած առ յօդուած քննարկումին, միաժամանակ առիթ ընծայելով առնչութիւն ունեցող այլ կողմերու, որ իր ժողովներուն ընթացքին ներկայացնեն այս գծով իրենց տեսակետները, որպէսզի յանձնարումը ընդհանուր եւ ճշգրիտ պատկեր մը գոյացնէ Լիբանանի տնտեսական եւ դրամական պայմաններուն վրայ այս օրինագիծի խաղաղ անդրադարձին մասին:

ՎՈԼԻՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երեկ իր գրասենեակին մէջ ժողով մը գումարեց Լիբանանի վոլիպոլի ֆետերասիոնին հետ, ներկայութեամբ նախարարութեան ընդհանուր տնօրէն Չէյտ Խիամի:

Ժողովին ետք ֆետերասիոնի նախագահ Շըհատէ Քասուֆ յայտնեց, որ որոշուած է, թէ նախարար կ'ազնայ յանձնարումը՝ հսկելու նոր ֆետերասիոնի ընտրութեան, որ պիտի կատարուի մէկ ամիսէն: Նոր ընտրութիւններէն ետք պիտի սկսի ֆետերասիոնի մրցաշարը:

Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց ֆետերասիոնին ու մարզական շահերուն առնչութեամբ նախարար Յովնանեանի ցուցաբերած նախանձախնդրութեան համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ՓՐՈԿՐԱՄԵՐՆԵՐՈՒ

Պաշտպանութեան նախարարութիւնը եւ բանակի հրամանատարութիւնը կարիք ունին պայմանագրով աշխատելու համար համալրագրիչ վկայեալ փորկարմրներու՝ հետեւեալ պայմաններով.

- Թեկնածուն լիբանանցի պէտք է ըլլայ, աւելի քան տասը տարի է վեր, ունենայ Բ. պաշարդեա կամ անոր համապատասխանող վկայական: Ան մաքու համակարգչային կամ վարչական - համակարգչային գիտութեան վկայական պէտք է ունենայ Լիբանանի մէջ պաշտօնապէս ճանչցուած համալսարանէ: Բանակ կամ վարչակազմի յանձնարարի համար դատական վճիռով պատժուած պէտք չ'ըլլայ:
- Բանակի հրամանատարութեան պէտք է ներկայացնել դիմումները 10 Մարտ 2002ԵՆ մինչեւ 20 Մարտ 2002:
- Անհրաժեշտ փաստաթուղթերուն եւ այլ մանրամասնութիւններու վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, Շաղոյեան կեդրոն, 2րդ յարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բոլոր այն ազգայինները, որոնք տեղեկութիւն կ'ունենան լիբանանեան պետութեան կողմէ գործադրուած TVAH տուրքին մասին, կրնան ներկայանալ Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, Շաղոյեան կեդրոն, 2րդ յարկ, աճէ Ուրբաթ, կէսօրը ետք ժամը 4ԵՆ 5, բացատրութիւն ստանալու համար ընկեր Յակոբ Արսիսի մասին (երկուեայ հաշուեթմնի), իրենց դիմագրուած դատարարութիւններուն գծով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՍՐՔ. ՔԱՌՍ. ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ուրախութեամբ կը յայտնենք, որ այս Կիրակի 10 Մարտ 2002ին յատուկ հանդիպութեամբ պիտի նշուի Սրբոց Զառանգի Մանկանց Եկեղեցոյ անուանակոչութեան տօնը:

Երեկոյեան պիտի կատարուի եկեղեցոյ «Նարեկացի» երգչախումբին կողմէ, «Եկմալեան» քառաձայն եղանակով, խմբավարութեամբ՝ պրն. Գեորգ Պէպեճեանի: Ս. պատարագի աւարտին պիտի կատարուի մատաղի օրհնութիւն: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՊ. Տ. ՆՈՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԱՇԸՔԵԱՆ

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ ըլլալու Սուրբ եւ անմահ պատարագին եւ հաղորդուելու օրուան պատգամով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՐՔ. ՔԱՌՍ. ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հ. Յ. Գ. ԼԵՄԻ «ՐԱՖՅԻ» ՄԱՍՆԱԳՑԻՆ

ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՋԱՐԻ

14ԱՄԵԱԿԻ ՆՈՒՐՈՒԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Բանախօս՝

Հ. Յ. Գ. ԲԻՐՈՅԻ ԵՐԻՏՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մարտ 2002ին, Ազգային Արեւտից վարձարանի բակին մէջ, երեկոյեան ժամը 6:00ԵՆ սկսեալ:

ԸՐԱԽԻՐ

ՊՈՐՊԱՏԻՆ ԴԵՍ ԴՐՈՒՄԸ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԾԱՆՐ ՄԱՔՄԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Ե. ՄԻՈՒԹԻՒՆ - ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ

ԺԼՆԵԻ, 7 (ՌՈՅԹԸՐԶ).- Երոսպական Միու- թիւնը Հինգշաբթի օր Առեւտուրի Համաշխարհային Կապմակերպութեան մօտ Մ. Նահանգնե- րու դէմ պաշտօնական հարց ներկայացուցած է նախագահ ձորձ Պուշի կողմէ պողպատի շարք մը արտադրութիւններու դէմ հաստատուած ծանր մաքսատուրքերու գծով:

Ե. Միութեան քայլը Ուաշինկթընի հետ խորհրդակցութիւններու առաջարկի ձեւով եղած է՝ մաքսատուրքերու գծով, Ա. Հ. Կապմա- կերպութեան բանալիներու լուծման գործըն- թացներու ծիրէն ներս: Սման քայլերու դիմած են Աւստրալիա եւ Նոր Զելանտա, իսկ ձափոն անոր կապուած քայլ մը առած է:

Դիւանագետներ նախատեսութեամբ, Հա- րաւային Քորէա, Պրայիլ եւ Թայլան, որ տա- կարին նոր անդամակցած են Ա. Հ. Կապմակե- րպութեան, մօտ ատենէն նոյն քայլին պիտի դի- մեն:

Դիւանագետներ շեշտած են, թէ աշխարհի տարածքին պողպատ արտադրող երկիրներու մօտ լայնածիր վայրոյթ արձանագրուած է մաք- սատուրքերու գծով:

Ե. Միութեան պաշտօնատարներու գնահա- տումով, իրենց պողպատ արտադրող ընկերու- թիւնները 3,8 միլիար տոյր կորուստ պիտի արձանագրեն երեք տարիներուն, որոնց ըն- թացքին մաքսատուրքերը ի պօրու պիտի մնան:

ՌՈՒՍԻԱ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԵՐՈՊԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կ'ԸՍԵ ՇՐԵՕՏԸՐ

ՀՌՈՍ, 7 (ՌՈՅԹԸՐԶ).- Գերմանիոյ վարչա- պետ Կերհարտ Շրեյտերը Հինգշաբթի օր հրա- տարակուսած հարցազրոյցի մը մէջ յայտնած է, թէ Երոպայ խաղաղութիւն եւ բարօրութիւն պի- տի վայելէ միայն եթէ Ռուսիա «իր տեղը գտնէ» ՕԹԱՆԻ եւ Երոսպական Միութեան մէջ:

«Քորրիէրէ տելլա Սերա» թերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցին ընթացքին ան ըսած է, թէ իր տեսլականը Երոսպա մըն է, որ 20րդ դա- րու Արեւելքը - Արեւմուտք բաժանումներու վեր- քերք պիտի բուծէ:

Ինչ կը վերաբերի Ռուսիոյ Ե. Միութեան եւ ՕԹԱՆԻ անդամակցութեան, ան ըսած է, թէ պէտք է սպասել, որովհետեւ տնտեսապէս ատկիկ կարելի չէ մօտիկ ապագային:

Շրեյտերը կը խօսէր Իտալիոյ մէջ, Ուրբաթ օր- ւան (այսօր) երկկողմանի մէկ վեհաժողովին նախօրեակին:

ԼԱ ՅԵՅԻ ԱՏԵԱՆԻՆ ՍԵՋ

ՓՐԻՄԱՔՈՎ ՊԱՏՐԱՍ Ե ՎԿԱՅԵԼՈՒ ԻՆՊԱՍ ՄԻԼՈՇԵՒԻՉԻ

ՄՈՍԿՈՒԱ, 7 (ՌՈՅԹԸՐԶ).- Ռուսիոյ նախ- կին վարչապետ Ելզեյնի Փրիմաքով Հինգշաբ- թի օր յայտնեց, թէ պատրաստ է ներկայացնե- լու Եուկոսլաւիոյ նախկին նախագահ Սլոպո- տան Միլոշեւիչը արդարացող փաստեր:

Փրիմաքով, որ ներկայիս կը վարէ Ռուսիոյ Առեւտուրի Գրասենեակի նախագահութեան պաշտօնը, ըսաւ, որ պատրաստ է ներկայանա- լու ՄԱԿի պատերազմային ռճիրներու ատեա- նին եւ վկայելու 1990ական թուականներուն Պոսնիոյ եւ Բոսնիոյ տագնապին ընթացքին Միլոշեւիչի խաղած դերին մասին:

«Կրնամ վկայել միայն Միլոշեւիչի ունեցած դրական դերին մասին եւ ոչ թէ ծխտական, ինչպէս ատեանը կը փորձէ պիւք դատել այդ հիմամբ», ըսաւ ան:

Փրիմաքով նշեց, որ անցեալ ամիս պաշտօնա- կան հրաւեր մը չէ ստացած ներկայանալու Լա Հեյ: «Իմ վկայութիւններս անհատ մը պաշտպա- նելու նպատակով չեն, այլ ուղղուած են Լա Հե- յի ատեանին դէմ, որ սկսած է քաղաքական ատեանի մը վերածուիլ: Կրնամ վկայել Պոս- նիոյ եւ Բոսնիոյ տագնապի ընթացքին Միլո- շեւիչի խաղած դերին մասին, որոնց մէջ ես այլ ուղղակի դեր ունեցած եմ», աւելցուց Փրի- մաքով:

570 ՔԿ. ԹՄՐԵՑՈՒՑԻՉ ԿԸ ԳՐԱԻՈՒԻ

ՄՍՏՐԻՏ, 7 (ՌՈՅ- ԹԸՐԶ).- Մոյանիոյ ոսպիկանութիւնը երէկ ձերբակալեց թմրեցուցիչի 15 մաքսանեղներ, եւ գրաւեց 570 ՔԿ. թմրե- ցուցիչ, յայտնեցին իշխանութիւնները:

Մարտիտի եւ Վա- լենսիոյ մէջ ոսպիկա- նութեան կողմէ կա- րարուած խուզար- կութիւններու ըն- թացքին գրաւուեցան քսան ինքնաշարժ- ներ, 12 հազար փո- լար, 25 հազար եու- րօ, 11 համակարգիչ-

ՊԱՂՏԱՏ - ՄԱԿԲԱՆԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԺԱՄԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԵՆ

Կ'ԸՍԵ ԻՐԱՔԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳԼԽԱՒՈՐ ԾԱԿԱՏԻ ԴԵԿԱՎԱՐԸ

Իրաքի ընդդիմա- դիր զիխար ճակատի ղեկավարը երէկ յայտ- նեց, որ Պաղտատ - ՄԱԿ բանակցութիւն- ները, որոնք պիտի քննարկեն Կէնքի քննիչներուն վերա- դարձի հարցը, ժամա- վաճառութիւն են, որովհետեւ ապար- դիւն պիտի ըլլան: Ահ- մէտ Շալապի ըսաւ, որ Սատտամ Հիւսէյն կ'ուզէ պահել հաւա- քական քանդումի Կէնքերը եւ պիտի ստե- յի խաբէ անոնց թաքը- տոցները ծածուկ պա- հելու համար: Շալա- պի աւելցուց, որ տա- րիներէ ի վեր այս է կացութիւնը եւ ՄԱԿ ոչինչ պիտի իրագոր- ձէ բանակցութիւննե- րով:

Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրիի նա- խագահութեամբ իրաքեան պատուի- րակութիւն մը Նի- եորք կը գտնուի քա- նակցութիւններ կա- տարելու համար ՄԱ- Կի ընդհանուր քա- տուղար Քոֆի Անաի հետ: Անան վերստի պիտի պահանջէ, որ Իրաք վերադարձի արտօնութիւն ուս ՄԱԿի քննիչներուն, որպէսզի կարգ մը վայրերու մէջ քննու- թիւններ կատարեն եւ ստուգեն, որ հաւաքա- կան քանդումի բոլոր Կէնքերը փախուցուած են: ՄԱԿի Կէնքի քննիչները ղեկուե- րել 1998ին հռոտացան Իրաքէն եւ զբաղա- նալու արտօնութիւն չստացան: Պաղտատ կը մերժէ անոնց վե- րադարձը, պնդելով որ գաղտնի ու արգի- ւած ոչինչ ունի: Պաղտատ կը պահան- յէ նաեւ որ ՄԱԿի պատժամիջոցները վերցուի:

Շալապի ըսաւ նա- եւ, որ Անան ասկէ առաջ փորձ մը կատա- րած է եւ 1998ին Պաղ- տատի մէջ հանդի- պում ունեցած է Սատ- տամը: Օրին Անան ըսած էր, որ կա- տարելի է գործակցու- թիւնը, սակայն ոչինչ իրագործուեցաւ: Շա- լապի դիտել տուաւ, որ դիւանագիտական ու քաղաքական ճիգե- րը անօգուտ են եւ թէ ինք կը նախընտրէ պի- նուորական գործողու- թիւն մը, որ նմանի Աֆղանիստանի մէջ թալեպաններու իշ- խանութիւնը տապա- լելու գործողութեան: Շալապի շեշտեց, որ



Էլեքերու քննիչ յաճճախումի ճախագահ Լաս Պիլքս' ճակից եւ Քոֆի Անան Սապրիի հետ հանդիպումից:

Միացեալ Նահանգնե- րուն համար դժուար պիտի չըլլայ Սատտա- մի պարտութեան մատնել: Ան ըսաւ նա- եւ, որ ընդդիմադիր նակատը կ'ուզէ ղեկա- վարի դերակատարու- թիւն ստանձնել Սատ- տամը տապալելու որեւէ գործողութեան մէջ՝ ապահովելով ար- տաքին օժանդակու- թիւններուն:

Միացեալ Նահանգ- ներ - Իրաք լարուա- ծութիւնը չափազանց արած է աւելի քան ամիսէ մը ի վեր, երբ նախագահ ձորձ Պուշ յայտարարեց, որ Իրաք մաս կը կազմէ «չարութեան առանց- քի մը»: Այդ օրէն ի վեր, Իրաք կը պատ- րաստուի դիմագրաւե- լու ամերիկեան նոր յարձակում մը: Փոխ վարչապետ Թարեք Ալիյ յայտնեց, որ այս շարտանքներուն ընթացքին, Սատտամ երկու ժո- ղովներու նախագա- հած է, քննարկելու համար հաւանական պատերազմի մը հա- րաւոր տեղի ունենալիք պատրաստութիւննե- րը: Ալիյ աւելցուց, որ Իրաք անհրաժեշտ բո- լոր պատրաստութիւն- ներուն դիմած է: Սա- կայն Ալիյ չըսաւ, թէ ի՞նչ են այդ պատ- րաստութիւնները:

Միւս կողմէ, Միաց- եալ Նահանգներ յայտնեցին, որ Իրաք պիտուորական գործա- ծութեան համար կ'օգ- տագործէ մարդասի- րական օժանդակու- թիւնները՝ բեռնատար ինքնաշարժները: Ար- բանեակներու միջո- ցով ստացուած նկար- ները ցոյց կու տան, որ մօտաւորապէս հա- րար բեռնատարներ, Կօրանոցներ ու պի- նուորական այլ կեդ- ռոններ տեղափոխու- ած են: Ուաշինկթըն հարցը ներկայացուց ՄԱԿի Ապահովու- թեան Խորհուրդին, որուն մնայուն ան- դամներէն Բրիտա- նիա միայն համաձայն գտնուեցաւ ամերիկե- ան տեսակէտին, մինչ մնացեալները ըսին, որ նախ պէտք է ստուգել, որ բեռնա- տարները իսկապէս քաղաքային գործա- ծութեան համար նե- րածուած ու ապա՝ բա- նակին փոխանցուած են:

(ՌՈՅԹԸՐԶ)

մաց դրաւ ինքզինք, երբ Իրաքը թշնամի յայտարարեց: Ռիշար Կր Նարանա կը նախընտրէ հարցը լուծել ՄԱԿի շրջագի- ծէն ներս:

Ռիշար դիտել տուաւ, որ Պուշ յայ- տարարելով, թէ Իրաք թշնամի է, ինքզինք դրաւ մարտահրաւերի մը դիմաց եւ հիմա պարտաւոր է ռազմա- գիտական որոշում մը տալու Իրաքի հան- դէպ:

Ֆրանսա անցեալ ամիս կոչ ուղղած էր Միացեալ Նահանգնե- րուն՝ միակողմանի որոշումով Իրաքի դէմ գործողութեան մը չձեռնարկելու, պա- հանջելով, որ Պուշ նախ խորհրդակցի իր ղաշնակիցներուն հետ:

Միւս կողմէ, Թուր- քիոյ վարչապետ Պիլ- լիէնք Էճեփը ըսաւ, որ դրացի Իրաքի մէջ պատերազմ մը յայ- տարարելու կարիքը չկայ, որովհետեւ այս հանգրուանին շրջա- նային նախապատ- տուութիւնը պէտք է ըլլայ վերջ տալ պա- ղեստինեիսրայելեան արհիւնահեղութեան:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՖղԱՆԻՍՏԱՆԻ ՎՐԱՅՈՎ ԹՈՒՐԲՄԵՆԻՍՏԱՆԻ ԿԱԶԸ ԴԵՊԻ ԱՍԻԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ ՄՂԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՊԱՏ, 7 (ՌՈՅԹԸՐԶ).- Աֆղանիստանի եւ Թուրքմենիստանի ղեկավարները Հինգշաբ- թի օր քննարկած են ծրագիրներ՝ կապատար խողովակի մը գծով, որ բնական կապ պիտի մղէ ուժանիթի «ծարալը» ունեցող հարաւային ա- սիական շուկաները:

Այս երապ - ծրագիրը երկար ատենէ ի վեր խափանուած է Աֆղանիստանի տագնապին պատճառով:

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարպայ կէս օրուան այցելու- թիւն մը տուած է Թուրքմենիստանի մայրաքա- դաք Աշխապատ:

Նախագահ Մախարմուրաթ Նիպոյվ Քար- պայի հետ տեսակցութենէ մը ետք թղթակցուե- րու յայտնած է, թէ կայ ծրագիր մը՝ Թուրքմենիս- տանէն Աֆղանիստանի ճամբով դէպի Փաքիս- տան, ապա Հնդկաստան բնական կապ մղելու: Թուրքմենիստան աշխարհի բնական կապի մեծագոյն պահեստները ունի: Արեւմտեան քա- ռիւղի քանի մը ընկերութիւններ անցնող տա- րիներուն ծրագիրներ բնասարկած են՝ թուրքմենի կապի պեղումին համար:

Թուրքմենիստան նախկին խորհրդային միակ պետութիւնն է, որ Աֆղանիստանի սահ- մանակից է եւ ամերիկեան ուժեր չի հիւրընկա- լեր՝ հակաառաքելչութեան արշաի ծիրէն ներս:

ՌՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ՍՈՒՏԱՆԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ յայտնեց, որ Մ. Նա- հանգներ պուշացուցած են Սուտանը՝ 19 տար- ւան քաղաքացիական պատերազմը շարունա- կելէ:

«Սուտան - Մ. Նահանգներ երկկողմանի յա- րաբերութիւններու բարելաւումը կրնայ չիրա- կանանալ, եթէ քաղաքացիական պատերազմը շարունակուի», ըսաւ Փաուըլ:

Փաուըլ հաստատեց, որ Նախորդ խոստա- ցած է, որ քաղաքայիններու վրայ գործադրու- ած յարձակումները եւ անոնց դէմ կատարուած պայթումները պիտի կասեցնէ՝ վերջ տալու հա- մար Ափրիկէի ամենէն մեծ երկրի տագնապին, որ մինչեւ օրս սպաննուած են երկու միլիոն բնակիչներ:

Սուտանի տագնապը լուծելու համար ամե- րիկացի յատուկ պատուիրակ ձոն Տէնֆորթ բա- ական յառաջիակալք արձանագրած է: Ան յա- ջողած է Նուպայի լեռներուն մէջ բանակցու- թիւններ վարել եւ կրակմար յայտարարել, սա- կայն չէ կրցած կատարութեան կողմէ քաղա- քայիններուն դէմ՝ յատկապէս քրիստոնէայ, կատարուած ռմակոծումներուն վերջ մը դնել:

Մ. Նահանգներու կողմէ թափուող ճիգերը, Նախորդի մէջ խաղաղութիւն հաստատելու նպատակով, արդիւնք են առաքելչութեան դէմ ամերիկեան պայքարին Սուտանի մասնակցու- թեան:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը



Ձեր ինքնաշարժից պենզին, մագոլին, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճա- րումից հետ միաժամա- ցակ ցերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցու- թիւնը բերած կ'ըլլաք ստոնտեսական ծրագիր- ներու յաջողութեան:

- FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն:
• ՕՖՇԵԼԻ գրասենեակ, Պուրձ Ըսմուտ
• Շա մ ա գ գ ա յ ի ն ի գրախանութ, Պուրձ Ըս- մուտ
• Գրատուն Caravelle, Չալքա
• Գրատուն Sava, Այնճար
• Գրատուն Կոմի- տաս, Պէյրութ
• Obelix հաստատու- թիւն, Անթիլիաս

Ֆրանսայի պաշտ- պանութեան նախա- րար Ալէն Ռիշար ըսաւ, որ Ուաշինկթըն դժուարութեան մը դի-

Յազուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:
Յաղութ-բարձր նուէրներ եւ ինքնաշարժ մը

ԶՐՏԸ ԿԸ ՍՍՆԱԶ ԶՐԻՕՐԵԼ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԵՐԲ ԿԱՐԵԼԻ Է «ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՊՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏԱԼ»...

Եւրոպական խորհրդարանը 28 Փետրուարի իր որոշումով անգամ մը եւս պահանջեց Թուրքիայէն ճանաչելու Հայկական Յեղասպանութիւնը եւ վերցնել Հայաստանի շրջափակումը: Հայ Դատի աշխատանքներու ծիրէն ներս այս յաջողութիւնը վերահաստատեց այն համոզումը, որ մեզի համար եւրոպական կառույցներուն դահլիճները Թուրքիոյ հետ «խօսելու» յարմար ժամադրափայտը են: Այս ուղղութեամբ տարուող աշխատանքը ինքզինք կ'արդարացնէ, նկատի ունենալով, որ եւրոպական կառույցները, ուր ներկայացուած են Եւրոպայի գլխաւոր պետութիւնները, լուսապէս կ'ըմբռնեն Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը, փաստ՝ Հայկական Յեղասպանութեան անդրադարձող տեղեկագիրին վաւերացումը քուէներու ջանքերով մեծամասնութեամբ, ի հեճուէս խուճար մը խորհրդարանականներու, որոնք, յայտնապէս աշխատակցելով Թրքական որոշ շրջանակներու հետ, Յեղասպանութեան ճանաչման հարցը կը փորձէին պարպել իր քաղաքական պարունակէն եւ փոխադրել հոն, ուր «պատմութիւնը պէտք է ձգուի պատմարաններուն» եւ «պատմական տարակարծութիւնները պէտք է լուծուին գարկ տալով մշակութային եւ տնտեսական յարաբերութիւններուն»:

Հայկական նորագոյն յաղթանակին դէմ չուշացաւ Թրքական ջղաջար հակազդեցութիւնը: Բարձրաստիճան պաշտօնատարներ, ներառեալ՝ երկրին վարչապետը եւ փոխ վարչապետը, քննադատեցին Եւրոպական խորհրդարանին որոշումը, զայն նկատեցին «անհիմն» եւ հարցականի տակ առին Եւրոպական խորհրդարանին փաստահիւստութիւնը: Անգարայի արտաքին գործոց նախարարութիւնը յատուկ հաղորդագրութեամբ մը «պատմական դեպքերու մասին քաղաքական եւ միակողմանի գնահատականներ» տալէ զերծ մնալու յորդորներ կարգեց Եւրոպական խորհրդարանին եւ անոր որոշումը նկատեց Եւրոպական Միութիւնը Թուրքիա կապերու զարգացման սպառնացող երեւոյթ: Ուշագրաս էր Թուրքիոյ

խորհրդարանին հակազդեցութիւնը: խորհրդարանին մէջ ներկայացուած բոլոր ուժերը, ընդդիմադիր թէ իշխանամէտ, միացեալ յայտարարութեամբ մը դատապարտեցին Հայկական Յեղասպանութեան անդրադարձող տեղեկագիրին վաւերացումը՝ զայն համարելով «հայկական կեղծ պահանջներու գորակցութիւն» եւ «Եւրոպական Միութեան անդամակցութեան թուրքիոյ վերականգնութիւնը ջլատելու փորձ»:

Թրքական հակազդեցութեան մէջ կ'արժէ լուսարձակի տակ առնել Եւրոպական Միութեան մօտ Թուրքիոյ դեպքան վուրայի յայտարարութիւնները: Վուրայ Թրքական պետական պատկերասփռուէն յայտնեց, որ անդամակցութեան գծով Եւրոպական Միութիւնը Թուրքիայէն կը պահանջէ այն, ինչ որ կը պահանջէ որեւէ այլ թեկնածուէ: Հայկական Յեղասպանութեան մասին Եւրոպական խորհրդարանի վերջին որոշումին անդրադառնալով՝ Վուրայ նշեց, որ «Թուրքիոյ անդամակցութիւնը որեւէ ազդեցութիւն չի կրեր այս որոշումէն»: Յստակ է Վուրայի նպատակը՝ Յեղասպանութեան հանցագործները Եւրոպական խորհրդարանի պահանջը արժեզրկել եւ նսեմացնել Թուրքիոյ անդամակցութեան նախապայման այն յայտարարութեան, թէ Եւրոպական Միութիւնը Թուրքիայէն «յատուկ պահանջներ» չունի եւ կը պահանջէ միայն այն, ինչ որ կը պահանջէ որեւէ այլ թեկնածուի պարագային, ապա այս մեկնարանութիւնը պարզապէս կը նպատակադրէ անտեղեկ պահանջ եւ թիւր կարծիք ստեղծել հանրութեան մէջ: Յիշեցումի գնով պարզապէս պէտք է կրկնել, որ Թուրքիա հարց ունի գրեթէ իր բոլոր դարացի երկիրներուն հետ, Թուրքիոյ արտաքին թէ ներքին քաղաքականութիւնները կը ձեւաւորուին զինուորականութեան կողմէ, Թուրք քաղաքական բանտարկեալներուն թիւը աւելի քան 10 հազար է, մարդկային իրաւանց մարզը չափազանց խոցելի է, փոքրամասնութիւնները կ'ենթարկուին պետական խտրականութեան, Թուրքիա գրաւուած կը պահէ այլ երկրի մը տարածքները եւ, անշուշտ, կայ անհատոց Յեղասպանութեան հարց մը: Այս-

պիսի «յատուկ» դրութիւն մը «յատուկ պահանջներ» կ'ենթադրէ:

Սակայն այս բոլորէն անկախ, ուշագրաւը այն է, որ Վուրայի յայտարարութիւնները յատկապէս կը հակասեն Թուրքիոյ խորհրդարանական ուժերու միացեալ յայտարարութեան մէջ տեղ գտած տրամաբանութեան: Մինչ խորհրդարանը խիստ ոճով կը քննադատէ եւ միաձայնութեամբ կ'որոշեցրէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումի պահանջը դնող Եւրոպական տեղեկագիրը՝ «Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան դէմ կեղտոտ յարձակում» որակող յայտարարութիւն մը, նոյնինքն Եւրոպական Միութեան մէջ Թուրքիոյ ներկայացուցիչը հանդէս կու գայ այն համոզումով, թէ Թուրքիոյ անդամակցութեան հարցը որեւէ ազդեցութիւն չի կրեր այս որոշումէն: Երկերես քաղաքականութիւն նկատե՞լ այս երեւոյթը: Աւելի ճիշդ պիտի ըլլայ զայն համարել երկպառակուած քաղաքականութիւն:

Եւրոպական խորհրդարանի 28 Փետրուարի որոշումը անգամ մը եւս եկաւ փաստելու, որ եթէ երբեք Եւրոպական Համայնքը ընդունի ներառել Թուրքիան, ապա կը պահանջէ, որ Թուրքիա ըլլայ «Եւրոպայի հիւանդ մարդը», նախապայման մը, որ անխուսափելի կը զարձնէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը: 28 Փետրուարի դիրքորոշումը նաեւ կը թելադրէ միշտ պատրաստ ըլլալ հակադարձելու եւ չհզոքացնելու նոյնինքն Եւրոպական հրապարակներու վրայ յաջողութիւն գտնել փորձող Թրքական եւ Թուրքիոյ զանազան հակահայ նախաձեռնութիւնները: Այս իմաստով, կը գտնուինք մարտահրաւէրներու դիմաց: Թուրքեւագերիական միացեալ քարոզարշաւը կը փորձէ նոր որակ ստանալ:

Դասական դարձած քարոզչական խեղաթիւրումներուն կողքին, Թուրքիոյ եւ Ազրբայճանի խորհրդարանները կը փորձեն զարկ տալ այսպէս կոչուած «Սոցիալիստիկ Յեղասպանութեան» ճանաչման: Եւրոպական կառույցներու կողմէ: Պահը կը թելադրէ զգօն ըլլալ:

Լ. ԱՒԵՏԱՆԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՄՊԱՌՆԱԼԻՔ ԶԻ ՈՂՋԱԿԻԶՈՒՄԻՆ

Հայաստանի Հանրապետութեան մօտ Իսրայէլի դեսպան տիկին Ռիփթա Քոհնէնի Հայկական Յեղասպանութիւնը նսեմացնելու վերջերս կատարած արտայայտութիւնը նորութիւն մը չի ներկայացնէր, նկատի առած, որ պետական մակարդակի վրայ այս յայտարարութեան նախորդած էր Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէսի 2001ի Ապրիլին Անգարայի մէջ կատարած ծանօթ յայտարարութիւնը, ուր գրեթէ նոյնութեամբ Փերէսը րած էր. «Մենք կը մերժենք Ողջակիցութիւն եւ Հայկական Յեղասպանութեան միջեւ գուցահեռներ տեսնել: Ողջակիցութիւն մտնել չէ պատահած: Հայերու հետ պատահածը պարզապէս ողբերգութիւն է»: Հայկական Յեղասպանութեան հանդէպ իսրայէլեան այս ծանօթ կեցուածքին ետին անշուշտ կը կանգնի քաղաքական գործօնը:

Առաջին հերթին՝ արաբական զինակցութեան խաչմերուկին վրայ ծուրարած Իսրայէլի համար անհրաժեշտ է ոչ արարք, սակայն իսլամ

պետութեան մը նեցուկը՝ շրջանէն ներս ընդդիմաւորուած համար արաբական քաղաքական եւ տնտեսական ճնշումին: Թուրքիա, իր կարգին, խիստ կարիքը ունի հրէատարական քաղաքական լուսիլիկին, մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ, ուր Թրքական պետութեան ամէնօրեան մղձաւանջներն են լուսիլիկի հայկական, յուսակական եւ կիպրական կազմակերպութիւնները: Երկրորդ, շրջանէն ներս անոնք ունին հասարակաց իրենց թշնամիները՝ Իրաքը եւ Սուրիան: Այս վերջինին վրայ դրուած թրքական սպառնալիքներու արդիւնք էր Սուրիա ապստան գտած ՔԱԿի դեկափար Օճալանի հետագումը եւ ապա՝ ձերբակալութիւնը:

Երրորդ, Իրանի անմիջական նեցուկով հովանաւորուող Թրքական ծայրայեղ իսլամական կազմակերպութիւնները դատկիւն սուրի նման յարաճուն վտանգ կր ներկայացնեն Անգարայի աշխարհիկ վարչակարգին: Իսկ իսրայէլեան ճակատին վրայ մարտնչող լիբանանեան Հըզպալլա կազմակերպու-

թեան բարոյական հովանորը կը հանդիսանայ Իրանի իսլամական Հանրապետութիւնը:

Թուրք-հրէական նոր դաշինքին ամրապնդման անկիւնաքար է հանդիսանալու երկրի կը հանդիսանալու միջեւ կնքուած 1996ի զինուորական դաշնագիրը, որմէ ետք, Մ. Նահանգներու քաղաքական բեմին վրայ հրէական լուսիլիկի Հայ Դատի աշխատանքներուն դէմ վտանգաւոր պատուար մը հանդիսացաւ, յաճախ իր գործադրած ճնշումներով ու քարոզչութեամբ ձախողութեան դատապարտելով Հայ Դատի ի նպաստակրեւոր բանաձեւեր Մ. Նահանգներու Քոնկրէսէն ներս:

Տակաւին ընթացիկ տարուան Յունուարին, Մ. Նահանգներու մէջ գործող հրէական 9 կազմակերպութիւններ նախապահ Պոնշին յղեցին թրքական յոյսերը իր կարեւորութեամբ կը շեշտուէր Թուրքիոյ նման դաշնակիցի մը կարեւորութիւնը յետ Սեպտեմբեր 11ի աշխարհաքաղաքական նոր համակարգին մէջ: Դարձեալ վերջին յեղափոխութիւնը Ուաշինգթոն պաշտօնական այցելութեան ընթացքին հրէական երկու կազմակերպութիւններ՝ Bnai B'rith եւ American Jewish Council պարզեւտորեցին Թուրքիոյ վարչապետը, շեշտելով շրջանէն ներս ահաբեկչութեան դէմ պայքարի գծով երկու երկիրներու

յարատեւ գործակցութեան եւ զինակցութեան անհրաժեշտութիւնը: AIPAC, Jinsa, B'nai B'rith, ԱԿ ԱԵԿ, Hadassah կը կազմեն Մ. Նահանգներու մէջ գործող հրէական լուսիլիկի կազմակերպութիւններու ողնախիւնը: Սակայն շարքին դրօշակիրը կը հանդիսանայ 1951ին հիմնուած American-Israeli Public Affairs Committee (AIPAC) Մ. Նահանգներու շրջանային իր 7 գրասենեակներով, աւելի քան 100 պաշտօնեաներով եւ 13 միլիոն տոլար տարեկան պիւտճեով: Նման անհայտնի լուսիլիկի շնորհիւ հրէական յայտարարութեան 100 հոգիները Մերակոյտին մէջ ունին հրէական ծագումով 10 ծերակուտականներ, իսկ ներկայացուցչական Տան մէջ անոնց ներկայութիւնը կը կազմէ 6%:

2000ի Հոկտեմբերին, ներկայացուցչական Տան սեղանին վրայ դրուած հայնապատ թիւ 398 բանաձեւին վաւերացման խնդրանքները, անգործութեան մատնուած Թրքական լուսիլիկի դիմէր իր վերջին յեղափոխութեան լուսիլիկի թաւերուն, AIPACի ներկայացուցիչը Քոնկրէսի նախագահ Տէնիս Հասթիթի հետ զլուր գլխի տեսակցութեան մը ընթացքին, խաղաքարտեղ բանալով հարց կու տար ամերիկացի քոնկրէսականին, թէ քանի մը հայկական քուէ շահելու իր ճիգին մէջ, որքանո՞վ

պատրաստ է կորսնցնելու հրէական բազմապատիկ քուէները... Դէպքերու գարգացման ընթացքը ծանօթ է բոլորիս, մինչեւ Փերէսի միջամտութիւնը նախագահ Քլինթոնի մօտ եւ Հոկտեմբեր 19ի մետասաներորդ պահու Քլինթոնի նամակը ներկայացուցչական Տան՝ առկախելու եւ նիստի օրակարգերէն դուրս ձգելու յիշեալ բանաձեւը...

Իսրայէլի դեսպանին յայտարարութիւնը փաստն ու վկայ է այն իրողութեան, որ արդի քաղաքականութեան ըմբռնումին մէջ բարոյագիտութիւնն ու մարդկային իրաւանց արժէքները պարզապէս տեղ չունին: Այլ անկիւնէ դիտուած, Իսրայէլի մօտ Հայաստանի պետական պաշտօնակատար մը նման արտայայտութեամբ Ողջակիցումը նսեմացնելու փորձութեան եթէ ենթակուած ըլլար, Իսրայէլ անվարան երկրէն դուրս վտարած կ'ըլլար նման յանդուգնութեան դիմած զիւրանագէտը: Քարոզչական նման բարդ միջավայրի մէջ է, որ անհրաժեշտ կը դառնայ հայրենի պետութեան եւ Հայ Դատի վահանակիր կազմակերպութիւններուն միջեւ գործակցութիւնը՝ սանձաւոր համար Հայկական Յեղասպանութեան դէմ շղթայագերծուած արշաւը:

ՎԱՀԱԳՆ ԳԱՐՍԳՆԵԱՆ

ԸԱԼԻՖՈՐՆԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՓԼԱԹՖՈՐՄԻՆ ՄԷՋ

Քալիֆորնիոյ Հայ Դատի Յանձնախումբը կը հաղորդէ, որ 17 Փետրուարին Քալիֆորնիոյ Դեմոկրատական Կուսակցութիւնը իր փաթեթորմին «Ազատութիւն եւ Ժողովրդավարութիւն» բաժինին մէջ որդեգրած է Հայկական Յեղասպանութեան փաստը եւ որոշած է «Ամերիկեան վարչակարգը մղել՝ Հայկական Յեղասպանութիւնը պաշտօնապէս ցանցաւորելու»:

Հայկական Յեղասպանութեան ի նպաստ այս յաջող քայլը իրագործուած է Հայ Դատի Յանձնախումբին ջանքերով: Օգոստոս 2001ին Քալիֆորնիոյ Հայ Դատի Յանձնախումբի անդամներ՝ Արթիւր Մամբար, Ռիչարդ Սանիքեան եւ Ռիչըլ Նորոյեան, որ միաձայնակ Քալիֆորնիոյ դեմոկրատականներու շրջանային պատասխանատու է, Հայկական Յեղասպանութեան մասին յօդուած մը ներկայացուցած են կուսակցութեան, իսկ Օգոստոս 2001ին, Ռիչարդ Սանիքեան Ֆրեզնոյի մէջ գումարաւ կուսակցութեան շրջանային ժողովին ներկայացուցած է յօդուածին տրամադրութիւնները եւ... ներկայացուց լիքեղանց 5 տարիներու Հայկական Յեղասպանութեան ցանցաւորման ի նպաստ առնուած 3 բանաձեւերու գորակցութիւնը յայտնած է:

«ՄԵԾԱԳՈՅՆ ՎՏԱՆԳԸ» ՀԱՅԿԱԿԱՆ ԱՀԱՔԵԿՉՈՒԹԻՒՆ Է Կ'ԸՍԵ Ռ. ՄՈՒՍԹԱՅԱԵԻ

Ազրպէյճանի Գիտութեան Ազգային Ակադեմիայի Մարդկային Իրաւանց Հիմնարկի տնօրէն Ռոման Մուսաֆաեւ Ազրպէյճանի մէջ «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութեան» ներկայացուցիչ Մուսաֆաեւի վրային հետ հանդիպումի մը ընթացքին յայտարարեց, որ՝ «Թրքական աշխարհի մարդկային իրաւանց մարդկային սպառնացող մեծագոյն վտանգը հայկական ահաբեկչութիւնն է»:

Մուսաֆաեւ նաեւ ազրպէյճանական «Էլսո» թերթին յայտնեց, որ 17րդ դարէն ի վեր ի գործ դրուող հայկական ահաբեկչութեան մասին հանրագիտարանի մը պատրաստութիւնը օրակարգի վրայ է: Աւելին, ծրագրուած է խորհրդաժողով մը կազմակերպել այս նիւթին շուրջ:

ՂԱՐԱԲԱՂԸ ԶԷՆՔԻ ՈՒԺՈՎ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ԿՈՉ

«Թուրան» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ Ազրպէյճանի «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութեան» գերագոյն խորհուրդի Մարտ 2ի նիստին որդեգրուած են բանաձեւեր, որոնք մտահոգութիւն կը յայտնեն հայազերիական հարցին լուծման ձգձգումին եւ ԵԱՀԿի աշխատանքներուն համար:

Նիստին ընթացքին նկատել տրուած է, որ վերջին 9 տարիներուն հարցը լուծելու քայլեր չեն առնուած, ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի բանաձեւերը չեն գործադրուած եւ ազերիներու «Յեղասպանութեան» փաստերը միջազգային հանրութեան չեն ներկայացուած: Հետեւաբար կազմակերպութիւնը պահանջած է նախագահ Հայտար Ալիեւի հրաժարականը:

«Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութիւնը» դիմած է նաեւ ԵԱՀԿի պատասխանատու Ռայմոն Կամախի եւ յայտնած է, թէ ԵԱՀԿը Ղարաբաղի հարցին լուծման ուղղութեամբ ոչ մէկ յառաջդիմութիւն արձանագրած է: Կազմակերպութիւնը ԵԱՀԿին պահանջած է Հայաստանի դէմ պատմամիջոցներ որդեգրել եւ դիտել տուած է, որ այսպէս ԵԱՀԿի Մինսքի խմբակի պիտի չչալողի Ղարաբաղի հարցը լուծել: Կազմակերպութիւնը այս առիթով կոչ ուղղած է ազերիներուն՝ ԵԱՀԿի «հայամտ» Մինսքի խմբակին որոշումները մերժելու եւ բռնագրաւեալ հողերը զենքի ուժով ազատագրելու:

ՈՒՇԱՅԱԾ «ՅԱՅՆԱԳՐՈՒԹԻՄ ԱԸ»

«ՂԱՐԱԲԱՂԸ ԵՐԲԵՔ ՀԱՅՆՈՒՆ ՊԱՏԿԱՆԱԾ ԶԷ...»

Վերջերս Պաքուի մամլոյ ակումբին մէջ տեղի ունեցած է «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութիւնը եւ արդի ցանցաւորման մասին» նիւթով կլոր սեղան մը, որուն իրենց մասնակցութիւնը բերած են Թուրքիայէն հրաւիրուած քաղաքագէտներ: Կլոր սեղանին ընթացքին Ազրպէյճանի Մտաւորականութեան Միութեան նախագահ Աբդի Մամեթպէյլի իր ելոյթին մէջ յայտնած է, թէ Ազրպէյճանի ժողովուրդը ծանօթ չէ Կիպրոսի մէջ ապրող թուրքերու հարցերուն: Ան ըսած է, թէ Թուրքիա 1974ին իր գորքերը Կիպրոս մտցուցած է օգտուելով... «Երաշխաւորի իր իրաւունքէն»:

Մամեթպէյլիի համաձայն, «Ղարաբաղը երբեք հայերուն պատկանած չէ, ինչպէս հայեր կը փորձեն համոզել ամբողջ աշխարհը: Անոնք միայն հիւրեր են Ազրպէյճանի հողին վրայ»: Թուրքիայէն ժամանած քաղաքագէտները դիտել տուած են, որ եթէ հայերը Ղարաբաղի հարցին լուծման մէջ քաղաքակիրթ մօտեցում չունենան, միակ լուծումը կը մնայ ուժի օգտագործումը:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
 Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որելէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանունը հասցնեն հրատարակման քուակազմէն առնուած օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՕԱՄԸ 5:00:
 ՄԱՀԱԾԳՆԵՐԸ Բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գալն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Նորաստի Թոշակահալ

«ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՈՒԼՈՑԷ ՇԻՆՈՒԱԾ ԵՆ»

ԱՂՈՍ ԷԿՈՅԵԱՆԻ ՏԱՐԱԾԱՍԱՐԶԱՅԻՆ «ՍԹԻՆՊԵԷԹ» ԳՈՐԾԸ ԿԸ ՑՈՒՑԱՂՈՒԻ ԼՈՆՏՈՆԻ ՍԷՋ: ԱՅՍ ԱՈՒԹՈՎ ԲԱՆԱՏԱՐԱՅ ԲԵՍԱՂՐԻԶԸ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՅՕՂՈՒԱԾ ՄԸ ԳՐԱԾ Է «ՏԸ ԿԱՐՏԻՆ» ԹԵՐԹԻՆ ՍԷՋ ԿԵՐԼՈՒԾԵԼՈՎ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԵ ԵՄ ԱՂԴԻ ՍԻՋՈՑՆԵՐՈՒՆ ԸԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՄ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ: ՍՏՈՐԵՄ՝ ԱՍԲՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Մամուլի Պեքէթի «Քրափ» լասթթեյֆի (Քրափի վերջին ձայներիցը) թատերերգութիւնը անկասկած 20րդ դարու ամէնէն ազդեցիկ թատերական մենախօսութիւնն է: 1958ին «Ռոյալ Քոթթ» թատերասրահին մէջ առաջին անգամ ներկայացուած այս գործը մեծապէս իր ժամանակէն առաջ էր մարդկային յիշողութեան եւ ձայնագրութեան արհեստագիտութեան վերաբերող իր դիտարկութիւններով: Թատերգութեան մէջ տարեց մարդ մը իր 69րդ տարեդարձը կը սօնէ դասաւորելով իր ձայնագրութիւններով լեցուն տուփ մը, փորձելով դէպքերու առնչուած իր յիշողութիւնները համեմատել իր հաշուետետրի մը մէջ իր խճճած նոթերուն հետ: Ան կը կեդրոնանայ 30 տարի առաջ ձայնագրութեան յիշողութեան մը վրայ, լսելով 39 տարեկանին կատարած՝ շուրջ 10 տարի առաջ իր մէկ այլ ձայնագրութեան վերաբերող կարծիքները: աշխատանք մը, գորան «աւաւր», բայց օգտակար կը նկատէ նախքան «նոր յետադարձ ակնարկի մը ձեւնարկելը»:

Անցումային այս վիճակին պատկերումով, այսինքն՝ երբ տարեց մարդը ականջ կը դնէ իր երիտասարդ ինքնութեան, որ կարծիք կը յայտնէ իր աւելի երիտասարդ ինքնութեան մասին, Պեքէթ կ'արտացոլացնէ անձնական արխիւ պահելու ծառայող արհեստագիտութեան հակասական բնոյթը, որ միաժամանակ կը շեշտուորէ եւ կ'արձգարկէ ապրուած փորձառութիւնը: Քրափ իր հին ձայներիցները կ'ունենան իրրեւ ներշնչումի տխուր արբիւր, պարզապէս՝ որպէսզի ամբողջացնէ իր արխիւը: Թատերգութեան վերջաւորութեան, ամբողջ գիշեր մը վիպերգական շատոնց մոռցուած վայրկեանի մը յիշողութիւնները լսելէ ետք, Քրափ պատրաստ է իր վերջին ձայնագրութիւնը կատարելու: Ան կը տառապի, սակայն վերամբարձ վիճակի մէջ է, անհանգուժումով է, բայց ներքով: Իր ձայնագրութեան աւարտին Քրափ գրեթէ անդամալուծուած է գիշերուան սկիզբը իր ունկնդրած յիշողութեան առթած մեղամարտութեամբ: Ան երկար ժամանակ հակած կը մնայ ձայնագրութեան գործիքին վրայ եւ կը կորսուի Ֆիլիպիան պահի մը առթած ինքնամոռացութեան մէջ: չի յիշեր պահը, սակայն անոր ոգեկոչումը կը ճնշէ իր վրայ: Ան կը գրկէ գործիքը, իր մոռցած սիրահարին պէս:

